ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով հանդերձանքի ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՀՋ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.07.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ն. Վարդանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Մամյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Ա.Թումանյանը և քարտուղար Ռ.Խաչատրյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՀՋ-18/3» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ** (ք. Երևան, Զ. Սարկավագի 157)
2. **«Դերձակ» ՍՊԸ** (ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2)
3. **«Եվրոտեքս»**ՍՊԸ (Գրիգոր Լուսավորչի փողոց, շ. 43)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի, «Դերձակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 «Եվրոտեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում /հայտում առկա փաստաթղթերում/ կա թերություն.

3.2.1 «Եվրոտեքս» ՍՊԸ-ի հայտի Հավելված 4 հանդիսացող գնային առաջարկում լրացված չէ կազմակերպության անվանումը,ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/		
				«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ	**«Դերձակ» ՍՊԸ**	**«Եվրոտեքս» ՍՊԸ***
1	վերնաշապիկներ	1272	5406000	4293000	4134000	8140800
2	վերնաշապիկներ	1272	5406000	4293000	4706400	8140800
3	համազգեստ	630	53077500	37273950	-	-
4	ուսադիր	4080	6120000	4080000	1009800	-
5	ուսադիր	1360	5644000	2040000	336600	-

*** Հանդիսանում է ԱԱՀ չվճարող:**

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1. Մերժել **«Եվրոտեքս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1,4,5 չափաբաժինների համար՝ **«Դերձակ» ՍՊԸ** -ին

2,3 չափաբաժինների համար՝ **«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ** -ին:

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝

1,4,5 չափաբաժինների համար՝**«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ**-ին

1.3 Ընթացակարգի **2** չափաբաժնի համար **«Դերձակ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ինքնարժեք և ԱԱՀ հանրագումարը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

1.4 Ընթացակարգի **3** չափաբաժնի համար **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակիցներ չկան:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ

կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ներկայացվելու օրվանից հաշված մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Ն. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա.Մամյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Ա.Թումանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ.Խաչատրյան